ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ։ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXIX, № 9, 1976

УДК 581

Հ. Հ. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ, Հ. Ա. ՍԵՐՈԲՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՇԻԲԼՅԱԿՆԵՐԻ ՖԼՈՐԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հոդվածը նվիրված է Հայկական ՍՍՀ հյուսիսային մասում տարածված շիբլյակների ֆլորիստական կազմի ուսումնասիրությանը։

Բուսականության այդ տիպը հանդիպում է Իջևանի, Շամշադինի, Նոյեմբերյանի և Ալավերդու շրջանների անտառային գոտու ստորին շոր, քարքարոտ լանջերին, ծովի մակերևույթից 450—1100 մետր բարձրության վրա։

Եզրակացվում է, որ Հայաստանում շիբլյակները ունեն երկրորդային ծագում և առաջացել են լայնատերև անտառների ոչնչացումից, որտեղ գերիշխում էր Qvercus iberica Stev.

Բալկանյան ժողովուրդները շիբլյակ անվանել են թփուտատեսակներից և ոչ մեծ ծառատեսակներից համադրված բուսական այն համակեցությանը, որը հիմնականում տարածված է շոր, քարքարոտ լեռնալանջերին 400-ից 1000, իսկ որոշ վայրերում նույնիսկ 1200 մետր բարձրություններում։

Նման բուսական համակեցություններ հանդիպում են ինչպես Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում, այնպես էլ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում։ Վերջինիս հյուսիսային շրջաններում կատարած մեր դիտողությունների հիման վրա կարող ենք ասել, որ շիբլյակ կոչվող այս բուսական համակեցությունը տարածված է Իջևանի, Շամշադինի, Նոյեմբերյանի, Ալավերդու շրջաններում՝ շոր, քարքարոտ սարալանջերին, անտառային գոտու ցածրադիր վայրերում (ուր տեղի է ունեցել առաջնային բուսականության ոչնչացումը մարդու, կենդանիների և այլնի կողմից), 450-ից 1100 մետր բարձրությունների սահմաններում։

Հոդվածում բերվում են 1974—1975 թթ. հունիս—հուլիս ամիսներին կատարած մեր դիտողությունների արդյունքները։

Շիբլյակներում յուրահատուկ և գերիշխող բուսատեսակ է համարվում ցաքին (Paliurus spina christi Mill.), *որն իրենից ներկայացնում է փշոտ, խիստ ճյուղավորված, հզոր արմատային սիստեմով թուփ։ Այն, ինչպես նշել են որոշ հեղինակներ [1—9] արագ բազմանում է ինչպես պտուղների տարածման, այնպես էլ վեգետատիվ բազմացման միջոցով։*

Հիմնվելով նշված շրջաններում տեղադիտական շրջագայությունների ընթացքում կատարած մեր ուսումնասիրությունների վրա, հարկ համարեցինք համառոտ ակնարկ տալ շիբլյակի բուսական կազմի վերաբերյալ, առայժմ չշոշափելով նրա էկոլոգիական և գեոբուսաբանական առանձնահատկությունները։

Այսպես՝ Իջևանի շրջանում, որտեղ շիբլյակները լայն տարածում ունեն, դիտողությունների համար ընտրեցինք երկու հողազանգվածներ։ Առաջին հողազանգվածը գտնվում էր Կրասնոսելսկ տանող կամուրջից դեպի Իջևան

150 մ հեռավորության վրա, Աղստև գետի ձախակողմյան սարալանջում։ Այստեղ թփուտատեսակներից աճում են Paliurus spina christi Mill., Rosa tomentosa Sm., R. spinosissima L., Astragalus sp., իսկ ծառատեսակներից՝ Zelkova carpinifolia (Pall) Dipp., Carpinus orientalis Mill, Ulmus subarosa Moench., Juniperus oblonga M. G., Juniperus excelsa M, B.:

Խոտաբույսերից՝ 30-ից ավելի տեսակներ, որոնցից գերիշխում են՝ Xerantemum squarrosum Boiss., Achillea micrantha M. B., Inula cordata Boiss., Teucrium orientale L., T. polium L., Sideritis montana L., Salvia sclerea L., Tripleurospermum inodorum (L.) Sch. Bip., Erysimum cuspidatum (M. B.) DC., Plantago lanceolata L., Melitotus officinalis (L.) Dsc., Ajuga chia (Poir) Schreb. Linaria armeniaca Chav., Galium verum L., Convolvulus cantabrica L.:

Այս հողազանգվածի բուսականության ծածկը կազմում է 3,5—4 բալ։

Ուսումնասիրվող երկրորդ հողատարածությունը գտնվում է Հախկխլու գյուղից դեպի Իշևան՝ 550 մ հեռավորության վրա, Աղստև գետի ձախակողմյան սարալանջում։ Այստեղ, բացի նախորդ հողազանգվածում նշված թփուտներից, առկա են նաև Rhamnus pallasii F. et M., Lonicera caucasica Pall., Spirea crenata L., Jasminus fruticans L. տեսակները։ Ծառատեսակներից տարածված են Quercus iberica Stev., Carpinus orientalis Mill. Zelkova carpinofolia (Pall). Dipp., որոնք բուսականության ընդհանուր ֆոնում հանդիսանում են էդիֆիկատորներ, իսկ Juniperus L. լրիվ բացակայում է։ Այստեղ 30-ի հասնող խոտատեսակներից աչքի են ընկնում Xaranthemum squarrosum Boiss., Achillea micrantha M. B.. Achillea millefolium L., Teucrium polium L. Sideritie montana L., Salvia sclerea L., Tripleurospermum inodorum (L.) Sch. Bip., Achillea setacea Waldst. et Kit., Alyssum hirsutum M. B., Scutelaria orientalis L., Tragopogon dubius Scop.

Բուսականության ընդհանուր ծածկը կազմում է մոտավորապես 4 բալ։

Այլ պատկեր են ներկայացնում շիբլյակները Ալավերդու շրջանում, որտեղ մեր դիտողությունների համար որպես առաջին հողազանգված ընտրեցինք Կիրովականից դեպի Ալավերդի տանող ճանապարհի 20-րդ կմ-ի վրա գտնվող Դեբեդ գետի ձախակողմյան սարալանջի հյուսիս-արևելյան դիրքադրումը։ Այստեղ բացի ցաքուց, թփուտատեսակներից առկա էին նաև Prunus spinosa L., Crataegus orientalis Pall., Spirea crenata L., Rhamnus pallasii F. et M., Cotoneaster racemiflora (Dsf) Koch., Carpinus prientalis Mill., Astragalus sp.:

Ծառատեսակներն այստեղ բոլորովին բացակայում են։ Համեմատաբար ավելի շատ են տարածված խոտաբույսերը (մոտ 45 տեսակ), որոնցից գերիշխում են Achillea micranta M. B., Teucrium polium L., Sideritis montana L., Filipendula hexapetala Gilib., Brassica elongata L., Alyssum hirsutum M. B.:

Այստեղ բուսականության ընդհանուր ծածկը կազմում է 4 բալ։

Այս շրջանում մեր ընտրած երկրորդ հողազանգվածը Ալավերդուց 12 կմ հեռավորության վրա գտնվող, Դեբեդ գետի ձախակողմյան սարալանջում է, որտեղ, նախորդ հողազանգվածի համեմատությամբ, կլիմայական պայմաններն ավելի չորային են։ Այստեղ նույնպես ծառատեսակները լրիվ բացակայում են, իսկ թփուտատեսակներից աճում է միայն ցաքին։ Խոտաբույսերի

տեսակային կազմը նույնպես աղքատ է (15-ից ավելի), որոնցից ավելի տարածված են Achillea micranta M. B., Ajuga chia (Poir) Schreb., Teucrium polium L., Gypsophylla heteropoda Freyn., Reseda lutea L., Lisaea heterocarpa (DC) Boiss., Myosotis arvansis (L.) Hil., Allyssum hirsutum M. B.:

Այս հողաղանգվածի բուսականության ընդհանուր ծածկոցը կազմում է 3 բալ։

Երրորդ հողաղանգվածը, որ ընտրեցինք Ախթալա կայարանի ցուցատախտակի մոտ՝ Դեբեդ գետի աջակողմյան սարալանջում, ուներ համեմատաբար խոնավ պայմաններ։ Ի տարբերություն առաջին և երկրորդ հողաղանգվածների, այստեղ աճում են նաև հետևյալ ծառատեսակները՝ Quercus iberica Stev., Acer. trautvetteri Medw., Acer laetum C. A. M., Zelkova carpinifolia (Pall) Dipp., որոնք և բուսականության ընդհանուր ֆոնում հանդիսանում են էդիֆիկատորներ։ Իսկ թփուտատեսակներից տարածված են Paliurus spina christi Mill., Robus cesius L.:

Ինչ վերաբերում է խոտային ծածկին, ապա այստեղ նշեցինք մինչև 30 տեսակ, որոնցից գերիշխում են Achillea micranta M. B., Lamium album L, Origanum vulgare L., Plantago lanceolata L., Tripleurospermum inodorum (L.) Sch. Bip.. Convolvulus cantabrica L., Calystegia sepium L.) R. Br., Urtica dioica L., Gallium verum L., և այլն։ Այս հողաղանգվածի բուսական ծածկոցը կազմում է 4 բալ։

Շիբլյակների հանդիպում ենք նաև Նոյեմբերյանի շրջանում, որտեղ դրանք տարածված են համեմատաբար ավելի քիչ։ Առաջին հողաղանգվածը ընտրեցինք Իջևանից դեպի Նոյեմբերյան 18 կմ հեռավորության վրա գտնվող ճանապարհի ձախակողմյան սարալանջի հյուսիս-արևելյան հատվածում։ Այստեղ, բացի ցաքուց, թփուտատեսակներից տարածված են նաև Crataegus orientalis Pall., Rhamnus pallasii F. et M.: Ծառատեսակները նշված վայրում բացակայում են, իսկ խոտաբույսերից, որոնց տեսակների թիվը հասնում է մինչև 30-ի, գերիշխում են Achillea millefolium L., Coronilla varis L., Medicago sativa L. et Vass., Brunelia laciniata (L.) Bge., Trifolium campestre Schreb., Melampyrum arvense L., Fragaria vesca L., Agrimonia eupatoria L., Polygala anatolica Boiss et Heldr., Scabiosa micrantha Dsf., Cynanchum laxum Barti., Campanula grossheimii A. Char., Ornithogalum areuatum Stev., Potentilla recta L., Inula germanica L:

Այստեղ բուսականության հիմնական ծածկոցը կազմում է 4 բալ։

Երկրորդ հողաղանգվածը գտնվում է Նոյեմբերյանից 8 կմ հեռավորության վրա գտնվող ճանապարհի աջակողմյան սարալանջի հարավ-արևմտյան հատվածում։ Այստեղ, ինչպես նախորդ հողաղանգվածում, ծառատեսակները բացակայում են, իսկ թփուտատեսակներից աճում են նաև Crataegus orientalis Pall., Rhamnus pallasii F. et M.:

Ինչ վերաբերում է խոտաբույսերին, ապա դրանց թիվը հասնում է 20-ի, որոնցից գերիշխում են Xeranthemum squarrosum Boiss., Achillea micrantha M. B., Lapsana intenmedia M. B., Thalictrum minus L., Asparagus verticillatus L., Eryngium nugromontanum Boiss et Buche.

Այստեղ բուսականության ծածկոցը կազմում է 3,5 բալ։

Շիբլյակներ հանդիպում են նաև Շամշադինի շրջանում, որտեղ դրանք նույնպես լայն տարածում չունեն։ Դիտողությունների համար որպես առաջին հողազանգված ընտրեցինք Իջևանից Բերդ տանող ճանապարհի խաչմերուկից 3 կմ հեռավորության վրա գտնվող, ճանապարհի ձախակողմյան սարալանջի հարավային հատվածը։ Այստեղ, նախորդ շրջանի համեմատությամբ, բուսականության ծածկույթը բավական նոսր է և ծառատեսակները բացակայում են, իսկ բուսականության ընդհանուր ֆոնը արտահայտված է միայն ցաքով։ Խոտաբույսերից նշեցինք մոտավորապես 19 տեսակ, որոնցից գերիշխում են Tripleurospermum parviflorum (Willd) Pobed., Achillea micrantha M. B., A. setacea Waldst. et Kit., Teucrium polium L., Stachys intermedia Ait., Ajuga chia (Poir) Schreb., Origanum vulgare L., Consolida orientalis (J. Gay) Schröd., Adonis flammae Jaq., Melilotus officinalis (L.) Dsr., Medicago sativa L. em Vass., Eryngium campestre L., Plantago lanceolata L.:

Բուսականության ծածկոցը կազմում է ընդամենը 3 բալ։

Հետևյալ հողազանգվածում, որը ընտրեցինք նույն սարալանջի հյուսիսային հատվածում, ի տարբերություն նախորդի, աճում են նաև Rhamnus pallasii F. et M., Spirea crenata L., Crataegus prientalis Pall. Ինչ վերաբերում է խոտաբույսերին, ապա դրանց տեսակների թիվը հասնում մոտավորապես 18-ի, որոնցից աչքի են ընկնում Xeranthemum sparrosum Boiss., Teucrium polium L., Sideritis montana L,, Origanum vulgare L., Galium verum L., Anagalis arvensis L.: Scabiosa micrantha Dsf. և այլն։

Բուսականության ընդհանուր ծածկոցը կազմում է 4 բալ։ Հիշյալ վայրի երրորդ հողազանգվածը գտնվում է պահածոյի գործարանի դիմացի սարալանջի հարավ-արևմտյան հատվածում։ Այստեղ ծառատեսակները բացակայում են, իսկ թփուտատեսակներից առկա են Paliurus spina christi Mill և Spirea crenata L.:

Խոտաբույսերի տեսակների թիվը այստեղ հասնում է մինչև 20-ի, որոնցից ավելի շատ տարածված են Xeranthemum squarrosum Boiss., Achillea micrantha M. B., A. millefolium L., Teucrium orientale L., Medicago sativa L., Polygala anatolica Boiss. et Heldr., Sideritis montaua L., Fragaria vesca L., Euphorbia arvalis Boiss et Heldr., Thymus orientalis L., Cynanchum scandens (S ef L.) Kusn., Campanula dononiensis L.:

Այս հողազանգվածի բուսականության ծածկույթը կազմում է 4 բալ։

Շրջագայություններ կատարեցինք նաև Ամասիայի, Ստեփանավանի, Ղուկասյանի շրջաններում։ Սակայն այս շրջաններում շիբլյակներ բոլորովին չկան։

Այսպիսով, ի մի բերելով դիտողություններից ստացված տվյալները, կարող ենք ասել, որ հյուսիսային Հայաստանում տարածված շիբլյակներն ունեն երկրորդային ծագում և առաջացել են լայնատերև անտառների ոչնչացումից, որտեղ գերիշխում էր կաղնի վրացականը՝ Quercus iberica Stev.:

Երևանի պետական համալսարան

Ստացված է 20. I 1976 թ.

Г. А. ТОНАКАНЯН, Г. А. СЕРОБЯН

ОЧЕРК О ФЛОРИСТИЧЕСКОМ СОСТАВЕ ШИБЛЯКА В НЕКОТОРЫХ РАЙОНАХ СЕВЕРНОЙ АРМЕНИИ

Резюме

Проведено рекогносцировочное исследование растительности шибляка северных районов Армянской ССР. Установлено, что шибляк распространен в Иджеванском, Ноемберянском, Шамшадинском и Алавердском районах и является вторичным, возникшим на основе уничтожения широколиственных лесов. Во флористическом отношении шибляки Северной Армении довольно разнообразны.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Липский В. И.* Тр. тифл. бот. сада 4:7—116, 1899.
2. *Магакьян А. К.* Растительность Арм. ССР. М.—Л., 1941.
3. *Гроссгейм А. А.* и *Полипко Л. Н.* Тр. по геоб. обсл. пастб. Азерб. сер. А., вып. 4, Баку, 1929.
4. *Тахтаджян А. Л.* Тр. Бот. ин-та Арм. фил. АН СССР, т. II. Ереван, 1941.
5. *Тахтаджян А. Л.* Тр. Бот. ин-та Арм. АН СССР, 4:51—107, Ереван, 1946.
6. *Тахтаджян А. Л.* и *Федоров А. А.* Флора Еревана, Ленинград, 1972.
7. *Ярошенко П. Д.* Изв. Арм. фил. АН СССР 7(2), 1942.
8. *Махатадзе Л. Б.* Тр. Кировоканск. опытной станции I, 1941.
9. *Троицкий Н. А.* Влияние человека на растительность в бассейне верхнего течения реки Памбак, Ереван, 1935.